




ՄԵՎԱՆԻ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Եվրոպական Միության «Ջրային նախաձեռնություն պլյուս» ծրագիր

Սևանա լճի ջրհավաք ավազանը տարածք է, որտեղից մակերևութային և ստորերկրյա ջրերը հոսում են դեպի Սևանա լիճ: «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Սևանա լճի ջրհավաք ավազանի մասն են կազմում նաև Կեչուտի և Սպանդարյանի ջրամբարները, Արփա և Որոտան գետերի ջրհավաք ավազանները, որոնց ջրային ռեսուրսները հաշվի են առնվում ջրային հաշվեկշռի հաշվարկման ժամանակ՝ որպես տարանցիկ ջրեր:

Սևանի ջրավազանային կառավարման պլանը մշակվել է ԵՄՋՆ+ Արևելյան գործընկերության երկրների համար ծրագրի շրջանակներում՝ Եվրամիության ֆինանսական աջակցությամբ:



Ջրավազանային կառավարման պլանը (ՋԿՊ) փաստաթուղթ է, որը սահմանում է բնապահպանական նպատակները, որոնց ցանկալի է հասնել կառավարման պլանի իրականացման 6-րդ տարվա ավարտին: Բնապահպանական նպատակները սահմանվում են մակերևութային և ստորերկրյա ջրերի լավ կարգավիճակը ապահովվելու, Սևանի ջրավազանի ազգային ջրային պաշարները պահպանելու և ջրային մարմինների կարգավիճակի վատթարացումը կանխարգելելու նպատակով: Համաձայն ՋՇԴ 4-րդ հոդվածի, ՋԿՊ-ի իրականացման միջոցով պետք է հասնել հետևյալ բնապահպանական նպատակներին՝



ՋՇԴ-ի 11-րդ հոդվածը

սահմանում է պլանում ընդգրկվելիք միջոցառումների տեսակները, որոնք կարող են լինել հիմնական և լրացուցիչ:

Հիմնական միջոցառումներն ունեն իրավական ուժ պետության ներսում և պետք է կատարվեն ամբողջությամբ:

Լրացուցիչ միջոցառումների սահմանման կոնկրետ պահանջներ չկան: Սրանք կարող են լինել տարբեր բնույթի, և երկրները կարող են ադապտացնել դրանք, ելնելով իրենց ջրավազանների կառավարման տարածքներում (ՋԿՏ) կոնկրետ իրավիճակից

Մևանի ՋԿՊ-ի բնապահպանական միջոցառումների ծրագիր

Մևանի ՋԿՏ-ում բացահայտված առկա բոլոր խնդիրները և ճնշման տեսակները հաշվի առնելով կառավարման պլանում առաջին փուլի համար առաջարկվող հիմնական միջոցառումները բաժանվել են երկու խմբի՝ ջրի կառավարման բարելավման միջոցառումներ և տեխնիկական միջոցառումներ:

Ջրի կառավարման բարելավման միջոցառումներն են՝




ջրային օրենդրության բարելավում



ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում:

Տեխնիկական միջոցառումներն են՝



կեղտաջրերի մաքրման կայանների վերանորոգում և կոյուղու համակարգի կառուցում, ինչի համար որպես առաջնահերթություն նշված են 2000-ից պակաս բնակչություն ունեցող պիլոտային երեք համայններում՝ ախպրաձոր, Մաքենիս և Լճավան, նորարարական ԿՄԿ-ների կառուցում և 2000-ից ավելի բնակչություն ունեցող 3 ագլոմերացիաների համար նորարարական ԿՄԿ-ի կառուցում,



Սոթթի հանքարդյունաբերական տարածքների ռեկուլտիվացիա, վերականգնում,



Ջրամատակարարման և ոռոգման ցանցերի բարելավում՝ ջրի կորուստները նվազեցնելու համար,



Ռազմավարական ջրային պաշարների ավելացում՝ Արգիճիի և Աստղաձորի ջրամբարների կառուցման միջոցով,




Մանիտարական աղբավայրի կառուցում Կոտայիք մարզի 7 և Գեղարքունիքի մարզի 5 քաղաքային բնակավայրերի համար,



գետահունների ու սելավատարների մաքրում և գետերի ափերի ամրացում՝ ջրհեղեղների ու սելավների ռիսկերը նվազեցնելու համար,



հիմնական ջրօգտագործողների համար SCADA համակարգի տեղադրում և փաստացի ջրօգտագործման տվյալների ստացման ու մշակման ծրագրի ստեղծում:



Նկար 1. Մևանի ՋԿՊ-ի իրականացման առաջին փուլի համար առաջարկված հիմնական միջոցառումները

Առաջարկված հիմնական միջոցառումների իրականացման գնահատված արժեքը բերված է **նկար 1-ում**՝

Մևանի ՋԿՊ-ում առաջին փուլի համար առաջարկվող **լրացուցիչ միջոցառումներից** են՝



տվյալների, գիտելիքների և իրազեկման բարելավմանն ուղղված միջոցառումներ,



ջրի մոնիտորինգի համակարգի հզորացում: